

ՏԵՂԵԿԱԼՔ

2022 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարանի մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2022 թվականի առաջին եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3223 թղթակցություն, առաքվել՝ 2156 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ ազգային ժողովից՝ 4, Մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից՝ 1, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 141, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 275, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 297, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 829, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1075, գաղտնի թղթակցություն՝ 19, քաղաքացիներից՝ 578 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 57 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 5, մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 37, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 7, հանրապետական գործադիր մարմիններից՝ 5:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը:

Ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ:

2022 թվականի առաջին եռամսյակում կատարվել է 73 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: